

# Քննարկվեց համայնքների խմելու ջրի մատակարարման համակարգերը նվիրատվությամբ Հայջրմուղկոյուղի՝ ՓԲԸ օգտագործմանը հանձնելու խնդիրը

13.05.2016

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի մոտ կայացած խորհրդակցության ժամանակ քննարկվեցին Գեղարքունիքի մարզի առանձին համայնքների խմելու ջրի մատակարարման համակարգերը նվիրատվության կարգով Հայջրմուղկոյուղի՝ ՓԲԸ օգտագործմանը հանձնելու ՀՀ կառավարության արձանագրային որոշման իրագործման հետ կապված հարցերը: Քննարկումը տեղի ունեցավ Հայջրմուղկոյուղի՝ ՓԲԸ սպասարկման ոլորտում գտնվող համայնքների ղեկավարների, Հայջրմուղկոյուղի՝ ՓԲԸ Գեղարքունիքի տարածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, ՀՀ կառավարությանն առընթեր կադաստրի պետական կոմիտեի Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման ներկայացուցիչների, Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Արտաշես Նիկոյանի եւ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Դերենիկ Հովհաննիսյանի մասնակցությամբ: ՀՀ կառավարության արձանագրային որոշումն իրագործելու ուղղությամբ ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությունում հրավիրվել է խորհրդակցություն, որի ժամանակ տրվել են համապատասխան ցուցումներ ու հանձնարարականներ: Նվիրատվությամբ Հայջրմուղկոյուղի՝ ՓԲԸ-ին պետք է անցնեն այն համայնքների ջրամատակարարման համակարգերը, որոնք այժմ գտնվում են նույն կազմակերպության սպասարկման տիրույթում: Կառավարության որոշումը բխում է մարզի ջրամատակարարման համակարգի բարելավման նպատակով նոր միջոցներ ներգրավելու անհրաժեշտությունից, -նշեց Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը: Քննարկման ընթացքում առարկություններ ներկայացրին Շատջրեքի, Ծակքարի եւ Ներքին Գետաշենի համայնքների ղեկավարները՝ մարզպետին խնդրելով համապատասխան գերատեսչություններ ներկայացնել իրենց համայնքներում ծագած խնդիրները, որոնց կարգավորման դեպքում եւս իրենք առարկություն չեն ներկայացնի: Մենք ամեն ինչ անում ենք համայնքների ջրամատակարարումը բարելավելու եւ սպասարկման որակը բարձրացնելու համար: Եթե խնդիրներ են առաջացել, ուրեմն պետք է քննարկենք, փորձենք կարգավորել այդ խնդիրները, որպեսզի սպասարկող ու սպառող կողմերի միջեւ հարթվեն բոլոր տարաձայնությունները, -նշեց մարզպետը: Ըստ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Դերենիկ Հովհաննիսյանի՝ նվիրատվության կարգով առաջիկայում Հայջրմուղկոյուղի՝ ՓԲԸ օգտագործմանը կհանձնվեն Մարտունի, Գավառ, Ճամբարակ, Վարդենիս, Սեւան քաղաքների, Լիճք, Ծակքար, Ներքին Գետաշեն, Գանձակ, Կարմիրգյուղ, Սարուխան, Հայրավանք, Նորատուս, Բերդկունք, Լճափ, Ծովազարդ, Նորաշեն, Չկալովկա, Լճաշեն, Ծովազյուղ, Վարսեր, Շատջրեք գյուղերի ջրամատակարարման համակարգերը: